ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

18 օգոստոսի 2025 թվականի թիվ 1705-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Նինա Եսայանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի իրեն պատկանող, Գեղարքունիք, գ. Լճաշեն հասցեում գտնվող անշարժ գույքերի/կադաստրային ծածկագրեր՝ 05-040-0032-0016, 05-040-0046-0001/ համար նոր հասցեներ տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. 05-040-0032-0016 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Լճաշեն, 9-րդ փողոց թիվ 12 բնակելի տուն հասցե:
2. 05-040-0046-0001 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Լճաշեն, 8-րդ փողոց թիվ 10 / 1 հողամաս հասցե:
3. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2025 թվականի օգոստոսի 18
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

18 օգոստոսի 2025 թվականի թիվ 1706-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Արայիկ Ղուկասյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 7 / 4 հասցեում կառուցված 26.8քմ մակերեսով ավտոտնակը, 26.8քմ մակերեսով հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, նկատի ունենալով, որ ավտոտնակը և զբաղեցրած հողատարածքը ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չեն հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 7 / 4 ավտոտնակ հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 01.08.2025թ. թիվ 1610-Ա որոշմամբ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 13.08.2025թ. պետական գրանցում ստացած 26.8քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 1673 դրամ, զբաղեցրած 26.8քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 2887.5 դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած քաղ. Արայիկ Վազգենի Ղուկասյանին:
2. Քաղ. Արայիկ Ղուկասյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2025 թվականի օգոստոսի 18
ք.Սևան

1759

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

18 օգոստոսի 2025 թվականի թիվ 1707-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Նարգիզ Վարդանյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի իրեն պատկանող, Սևան համայնք, գ. Ծովագյուղ հասցեում գտնվող անշարժ գույքի /կադաստրային ծածկագիր՝ 05-049-0043-0011 / համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Ծովագյուղ հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Ծովագյուղ, 14-րդ փողոց թիվ 9 բնակելի տուն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2025 թվականի օգոստոսի 18
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

19 օգոստոսի 2025 թվականի թիվ 1708-Ա

ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Սևանի ջրային մարզաձևերի դպրոցի սան Սուրեն Թովմասյանի՝ Մոսկվայում կայանալիք ջրային մարզաձևերի միջազգային մրցաշարին մասնակցությունն ապահովելու նպատակով Սևան համայնքի 2025թվականի բյուջեի ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ ծախսերի հաշվից /բաժին 01, խումբ 6 դաս 1, հոդված 4727/՝ որպես աջակցություն, 100.000 դրամ փոխանցել մարզիկի մոր՝ Արփինե Թովմասյանի՝ 220202397968000 հաշվեհամարին:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆԵԼ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2025 թվականի օգոստոսի 19
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

19 օգոստոսի 2025 թվականի թիվ 1709-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 12.04.2001թ. N 286 որոշման 43-րդ կետով և հիմք ընդունելով քաղ. Սպարտակ Թովմասյանի դիմումը՝ վարձակալության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, գյուղ Ծաղկունք հասցեում գտնվող 4.29633հա մակերեսով հողատարածքը /կադաստրային ծածկագիր՝ 05-047-0302-0009/ ուղղակի վաճառքի կարգով իրեն օտարելու մասին, նկատի ունենալով, որ հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գյուղ Ծաղկունք հասցեում գտնվող, վարձակալության իրավունքով Սպարտակ Թովմասյանին պատկանող, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, վարելահող՝ գործառնական նշանակության 4.29633հա մակերեսով հողատարածքն ուղղակի վաճառքի կարգով օտարել Սպարտակ Ալեքսանի Թովմասյանին՝ հողի կադաստրային արժեքը /1քմ- 100.5 դրամ/ վճարելու պայմանով:
2. Սույն որոշումը ենթակա է հողի պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2025 թվականի օգոստոսի 19
ք.Սևան

1762

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20 օգոստոսի 2025 թվականի թիվ 1710-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. «Ֆենկա» ՍՊԸ-ի տնօրեն Էդգար Մխիթարյանի դիմումը՝ սեփականության իրավունքով «Ֆենկա» ՍՊԸ-ին պատկանող անշարժ գույքի /վկայական 1100782/ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Չկալովկա գյուղին հարող ափամերձ հատված հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Չկալովկա, 10-րդ փողոց թիվ 23 բենզալցակայան հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2025 թվականի օգոստոսի 20
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20 օգոստոսի 2025 թվականի թիվ 1711-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով քաղ. Վահագն Մելիքյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. Վահագն Մելիքյանին տրամադրել նախագծման թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Օղակաձև փողոց թիվ 39 / 1 հասցեում բնակելի տան կառուցման համար:
2. Վահագն Մելիքյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2025 թվականի օգոստոսի 20
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20 օգոստոսի 2025 թվականի թիվ 1712-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.02910հա մակերեսով հողամասը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Չարենցի փողոց թիվ 2 / 12 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2025 թվականի օգոստոսի 20
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20 օգոստոսի 2025 թվականի թիվ 1713-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-004-0205-0001 կադաստրային ծածկագրով /ք. Սևան/, 3.0հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, վարելահող, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության հողամասի նկատմամբ կատարել պետական գրանցում:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 3-րդ կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2025 թվականի օգոստոսի 20
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20 օգոստոսի 2025 թվականի թիվ 1714-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.00314հա մակերեսով հողամասը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Ա. Մյասնիկյան փողոց թիվ 54 / 2 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2025 թվականի օգոստոսի 20
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20 օգոստոսի 2025 թվականի թիվ 1715-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Կարեն Օհանյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, գ. Ծովագյուղ, 1-ին թաղամաս թիվ 7 / 4 հասցեում գտնվող անշարժ գույքը /վկայական՝ 23012024-05-0061/ առանձնացնելու և առանձնացված անշարժ գույքերի համար նոր հասցեներ տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Ծովագյուղ, 1-ին թաղամաս թիվ 7 / 4 հասցեում գտնվող 0.12հա մակերեսով անշարժ գույքը, համաձայն ներկայացվող հատակագծերի, բաժանել 2 միավոր գույքի և տրամադրել հասցեներ՝

1) առաջին միավոր գույքի՝ 0.04843հա մակերեսով հողատարածքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Ծովագյուղ, 1-ին թաղամաս թիվ 7 / 4 հողամաս հասցե;

2) երկրորդ միավոր գույքի՝ 0.07157հա մակերեսով հողատարածքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Ծովագյուղ, 1-ին թաղամաս թիվ 7 / 14 հողամաս հասցե:

2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2025 թվականի օգոստոսի 20
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20 օգոստոսի 2025 թվականի թիվ 1716-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԻՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄՐՑԱՇԱՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. 2025 թվականի օգոստոսի 27-ից 29-ը Սևան համայնքում անցկացնել Սևան համայնքի ղեկավարի՝ մինի ֆուտբոլի 2025 թվականի մրցաշար:
2. Հաստատել մրցաշարի Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի ղեկավարի՝ մինի ֆուտբոլի 2025 թվականի մրցաշարի Կանոնակարգը՝ համաձայն հավելված 1-ի:
3. Հաստատել մրցաշարի անցկացման կազմկոմիտեի կազմը՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի ղեկավարի՝ մինի ֆուտբոլի 2025 թվականի մրցաշարի համաձայն հավելված 2-ի:
4. Առաջնության կազմակերպման նպատակով ստեղծված կազմկոմիտեի նախագահին՝ առաջնության ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում, ներկայացնել հաշվետվություն անցկացված մրցաշարի արդյունքների վերաբերյալ:
5. Սևան համայնքի աշխատակազմի քարտուղարին՝

1) Մրցաշարի անցկացման վերաբերյալ պատրաստել հայտարարություն և հրապարակել:
2) Պատրաստել մրցաշարի հաղթողներին տրվող հավաստագրերը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2025 թվականի օգոստոսի 20
ք.Սևան

Հավելված 1
ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝
20.08.2025 ԹԻՎ 1716-Ա ՈՐՈՇՄԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի ղեկավարի՝ մինի ֆուտբոլի 2025 թվականի մրցաշարի

ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ

Սևանի համայնքապետարան,
«Սևան համայնքի Ն.Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ

ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Սևան համայնքում ֆուտբոլ մարզաձևի մասսայականացում, բնակչության շրջանում առողջ ապրելակերպի պրոպագանդում և համայնքի մարզական կյանքում երիտասարդների ներգրավվածության ապահովում.
2. Գեղարքունիքի մարզի հավաքական թիմ համալրելու նպատակով լավագույն մարզիկների հայտնաբերում:

ՄՐՑԱՇԱՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Մրցաշարն անցկացվում է երկու տարիքային խմբով՝
1-ին տարիքային խումբ՝ 9-11 տարեկան (2014-2016 թվականների ծնված)
2-րդ տարիքային խումբ՝ 14-16 տարեկան (2009-2011 թվականների ծնված)
Անցկացման պայմանները որոշում է մրցավարական հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ֆուտբոլի միջազգային ֆեդերացիայի կանոնակարգը, իսկ անցկացման կարգը՝ որոշվելու է՝ հաշվի առնելով հայտ ներկայացրած թիմերի քանակը (շրջանաձև, կիսաօլիմպիական կամ օլիմպիական համակարգով՝ երեք խաղափուլով):
Մրցաշարին չեն կարող մասնակցել այն երեխաները, որոնք գրանցված են ֆուտբոլի ֆեդերացիայում՝ որպես մարզիկներ:

ՄՐՑԱՇԱՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ՕՐԸ

Մրցաշարն անցկացվելու է ս/թ օգոստոսի 27, 28, 29-ին՝ ժամը 10:00-ին, Սևանի Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցում:
Կիսաեզրափակիչ փուլն անցկացվելու է Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի մարզադպրոցի հարակից մարզադաշտում:
Եզրափակիչ փուլն անցկացվելու է Սևան համայնքի Գագարին բնակավայրի նորակառույց մինի ֆուտբոլի դաշտում:

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Մրցաշարին մասնակցելու համար հայտ կարող են ներկայացնել Սևանի բնակավայրերի՝ 9-ից 11 և 14-ից 16 տարեկան երեխաներից կազմված թիմեր՝ 9 մարզիկ և մեկ ներկայացուցիչ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Մրցաշարի կազմակերպման բոլոր ծախսերը հոգում է Սևանի համայնքապետարանը

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

Մրցաշարի 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված թիմերը կստանան դրամական պարգև և հավաստագրեր Սևան համայնքի ղեկավարի կողմից:

ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ

Հայտերը ներկայացնել մինչև ս/թ օգոստոսի 26-ը «Սևանի Ն.Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ

Հավելված 2
ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝
20.08.2025 ԹԻՎ 1716-Ա ՈՐՈՇՄԱՆ

ԿԱԶՄԿՈՄԻՏԵ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Սևան համայնքի ղեկավարի՝ մինի ֆուտբոլի 2025 թվականի մրցաշարի

1) Նարինե Հարությունյան	- Սևանի համայնքապետարանի աշխատակազմի ԿՄՍԵՀ բաժնի պետ - նախագահ
2) Գարիկ Ավետիսյան	- «Սևան համայնքի Ն.Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի տնօրեն – պատասխանատու
3) Վիկտոր Կրեչին	- «Սևան համայնքի Ն.Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի փոխտնօրեն – կազմակերպիչ
4) Աննա Մովսիսյան	- ԿՄՍԵՀ բաժնի գլխավոր մասնագետ - կազմկոմիտեի անդամ
5) Օսիկ Ներսիսյան	- Սևան համայնքի Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզիչ - գլխավոր մրցավար
6) Կարեն Կարապետյան	- մրցավար
7) Գագիկ Խանզադյան	- մրցավար
8) Ռոբերտ Շուշանյան	- մրցավար